

2011-15թթ. ընթացքում անցկացված հարցումներից ստացված առաջարկությունների ամփոփում

ԵՊՀ ԻՄ Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից 2011-15թթ. ընթացքում անցկացվել են հարցումներ ուսանողների, պոֆեսորա-դասախոսական և ուսումնասօժանդակ անձնակազմի, արտաքին շահակիցների շրջանում: Դրանք նվիրված են եղել դասավանդման որակին և արդյունավետությանը, մասնաճյուղի պրակտիկանտների, շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքին, գնահատման համակարգի արդյունավետությանը, ներքին շահակիցների կողմից մասնաճյուղի գործունեության տարբեր կողմերի գնահատումներին, ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածությանը: Ի թիվս այլոց, բոլոր հարցումներում բաց հարցի տեսքով կազմակերպիչները հարցվողներին խնդրել են հայտնել մտահոգություններ և առաջարկություններ տվյալ ոլորտում թերությունները բացահայտելու և դրությունը կարելվույն շտկելու վերաբերյալ: Ստորև ներկայացնում ենք բաց հարցերը «փակելու» արդյունքում ստացված առաջարկությունների ամփոփ պատկերը:

Մասնաճյուղի ներքին կյանքի տարբեր կողմերից **ուսանողների բավարարվածության** հարցման մեջ ակնհայտ է շեշտված մտահոգությունը և ցանկությունը որոշ ոլորտների գործունեությունը բարելավելու վերաբերյալ: Մասնավորաբար մասնաճյուղի անվտանգության ապահովման համակարգի աշխատանքները կատարելագործելու ուղղությամբ արվել է 18 առաջարկ: Առաջարկներ են եղել կողմնակի անձանց մուտքը համալսարան արգելելու, ուսանողական տոմսերով համալսարանի տարածք մուտք գործելու, անվտանգության համակարգի աշխատողների համապատասխան համազգեստի առկայության, լսարանների վերահսկողությունը ուժեղացնելու, կողմնակի անձանց հանդեպ ավելի ուշադիր լինելու վերաբերյալ: Նույնքան առաջարկներ են եղել նաև սննդի ու հանգստի պայմանները բարելավելու վերաբերյալ /18 առաջարկ/: Ուսանողները համարում են, որ իրենց ուսումնական ակտիվության վրա դրականորեն կանդրադառնա, եթե մարդաշատ ֆակուլտետում ավելացվի բուֆետ, սպասարկողները ավելի ուշադիր լինեն սնունդի թարմության ու որակի ապահովման հանդեպ, բակում ավելացվեն նստարանները, հարաձուն ուշադրություն դարձվի մարդկային հարաբերությունների բարելավման հանդեպ, ավելի հաճախակի կազմակերպվեն գիտամշակութային միջոցառումներ: Թերևս բնական է նաև բուժկետի աշխատանքները բարելավելուն ուղղված առաջարկները /16 առաջարկ/: Դա վերաբերվում է նաև շաբաթ օրերին աշխատելու, աշխատանքային գրաֆիկը կարգավորելու, դեղամիջոցների որակի հանդեպ առանձնակի ուշադրություն դարձնելու, սան-հիգիենիկ պայմանները ավելի բարելավելու ցանկություններին:

Առաջարկությունների հաջորդ խումբը կազմում է ուսանողների կրթական կարիքների ավելի լիարժեք բավարարմանը: Դրանց գերակշիռ մասը կենտրոնանում է **թողարկող ամբիոնի գործունեության, ֆակուլտետ-ամբիոն արդյունավետ համագործակցության շուրջը**: Թվարկենք տվյալ կառույցների համար ուշադրության արժանի ուսանողական մի շարք առաջարկներ.

- Քննությունների և ստուգումների միջև ընկած ժամանակահատվածը ավելացնել;
- Ավելացնել մասնագիտական դասընթացների գործնական ժամաքանակները;
- Թեթևացնել ոչ մասնագիտական դասընթացների ծրագիրը և գնահատման չափանիշները;
- Գնահատման համակարգում ընդգրկել սեմինարների և գործնական պարապմունքների գնահատականները;
- Ձեռնարկել լրացուցիչ միջոցներ /նաև բարոյահոգեբանական բնույթի/ շրջափոխման /ռոտացիոն/ համակարգը ավելի արդյունավետ դարձնելու համար, որպեսզի ուսանողները պայքարեն գիտելիքի, այլ ոչ թե գնահատման համար;
- Ստեղծել ավելի մեծ հնարավորություններ համալսարանի կառավարման և զարգացման մեջ ուսանողների ավելի ակտիվ ներգրավման համար;
- Քննաշրջանի ժամանակացույցը կազմել այնպես, որ յուրաքանչյուր քննական գործընթացից առաջ ուսանողն ունենա առնվազն երկու օր՝ պատրաստվելու համար;
- Ավելացնել երկար դասամիջոցի տևողությունը;
- Ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակ ուսանողներին ազատել դասերից;
- Օտար լեզվի մասնագիտություններում ավարտական աշխատանքները գրել մասնագիտական լեզվով /անգլերեն, ֆրանսերեն/;
- Երկրորդ օտար լեզվի համար շրջանավարտներին տալ հատուկ վկայականներ, կամ ներառել դիպլոմի ներդիրում;
- Կապեր ստեղծել արտերկրի համալսարանների հետ, օրինակ՝ ՌԴ, ուսանողների փոխանակման ծրագրերին մասնակցելու համար;
- Ավելացնել պրակտիկայի ժամաքանակը;
- Մանկավարժական պրակտիկան անցկացնել ոչ միայն դպրոցում:

Առաջարկությունների ինքնատիպ խումբ են կազմում **կիրառական արվեստի** ոլորտի մասնագիտությունների ուսանողների առաջարկները, ինչը թերևս կապված է տվյալ մասնագիտությունների յուրահատկությունների, մասնագետների պատրաստման ուսումնական գործընթացների մեջ անկրկնելի տարրերի առկայության հետ: Մասնավորապես դա վերաբերվում է տարբեր պրակտիկաներին: Այսպես, տվյալ մասնագիտությունների որոշ ուսանողների համար ավելի ճիշտ է, եթե կիրառական արվեստի ֆակուլտետում պրակտիկան անցկացվի տարվա բոլոր եղանակներին, նրանք հաճախակի այցելեն արվեստի դպրոցներ: Առանձին ուսանողներ գտնում են, որ լսարանից դուրս դասադրոցների, պրակտիկաների համար պետք է իրենց տրամադրվի տրանսպորտ, պրակտիկայի վայրը ընտրվի ըստ ուսանողի ավարտական աշխատանքի թեմայի, և, «նույնիսկ», պրակտիկայի ընթացքում իրականացրած աշխատանքի համար ուսանողը վարձատրվի: Կան տվյալ մասնագիտությունների ուսանողներ, որոնք նպատակահարմար են գտնում արտադրական պրակտիկայի անցկացումը նաև 2-րդ կուրսում:

Ինչ վերաբերվում է բուն ուսումնական գործընթացին, այստեղ շահախնդիր ուսանողները գտնում են, որ տվյալ ֆակուլտետի ուսանողներին հարկավոր է իրենց

աշխատանքների համար տրամադրել անհրաժեշտ նյութեր, սեփականաշնորհել իրենց իսկ կատարած աշխատանքները՝ իրենց: Համապատասխան կառույցներին առաջարկվել է ստեղծել կամ կատարելագործել գրագողությունը կանխող մեխանիզմները:

Առաջարկությունների մյուս «փաթեթը» պատկանում է արտաքին շահակիցներին, որոնք արվել են նրանց կողմից **ԵՊՀ ԻՄ շրջանավարտների մասնագիտական որակների** գնահատման ընթացքում: Տվյալ առաջարկությունների մի մասը համահունչ է ներքին շահակիցների ըմբռնումներին, մտահոգություններին և դրանց հետ կապված առաջարկություններին: Այսպես, օրինակ, նրանք համալսարանին առաջարկում են ավելի մեծ ուշադրություն դարձնել մասնագիտական գիտելիքներին, մասնավորաբար տեղեկատվական համակարգերին ու տեխնոլոգիաներին, ավելի շատ տեղ տալ արտադրական ուսուցմանը, հնարավորինս ուսումնական գործընթացները կազմակերպել նաև հիմնարկ ձեռնարկություններում, առանձնակիորեն կարևորել գործնական աշխատանքները: Արտաքին շահակիցների որոշ ներկայացուցիչներ, որոնք տևականորեն առնչվել են համալսարանի հեռակա ուսուցման ուսանողների հետ, գտնում են, որ մասնաճյուղը պետք է ուղիներ գտնի հեռակա ուսուցման որակը բարձրացնելու համար: Դա վերաբերվում է ինչպես դասախոսական անձնակազմի կրթական ու մշակութային որակներին, այնպես էլ նյութատեխնիկական բազայի հարստացմանը: Ողջ մասնաճյուղի մակարդակով ցանկություն է հայտնվում շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան, ինֆրակառուցվածքը դարձնել ժամանակակից առաջադիմական կրթօջախներին համապատասխան: Կարևոր են համարում հասարակական կազմակերպությունների հետ ավելի սերտ առնչությունները, նրանց հնարավորություններից ավելի շատ օգտվելը, կապված բուհի հիմնահարույց խնդիրների լուծման հետ: Առաջնակարգ նշանակություն է տրվում նաև ապագա մասնագետների մանկավարժական և հոգեբանական կարողությունների խորացմանը և դրանք աշխատանքում կիրառելու ուղիներին:

Ինքնուրույն նշանակություն ունի արտաքին շահակիցների կարծիքը **ԵՊՀ ԻՄ նոր մասնագիտությունների կամ մասնագիտացումների ուսուցում կազմակերպելու վերաբերյալ:** Հասկանալի է, որ նոր մասնագիտության ստեղծումը հեշտ գործ չէ, պահանջում է տևական ժամանակ և, գործող օրենքների շրջանակում պահանջում է պրոցեդուրաների համալիր: Այդուհանդերձ, գործատուների կարծիքներն ու ցանկությունները այստեղ մեծ են: Դա հատկապես վերաբերվում է մասնագիտացումներին, որը, հասկանալի պատճառներով հաստատման շատ ավելի հեշտ ճանապարհ է անցնում, իսկ դրանց կազմակերպումն ու իրականացումը անհամեմատ ավելի մատչելի է մասնաճյուղի կադրային ուժերին, քան նոր մասնագիտությունների ստեղծումը: Օրինակները բավական են, որոնք հնչում են արտաքին շահակիցների կարծիքներում. Եկեղեցու պատմության, ռուսաց լեզվի, աշխարհագրության, ֆիզիկական կուլտուրայի, մենեջմենթի ուսուցիչներ; հաշվապահական հաշվառման, ոսկերչության, արծաթագործության, ծրագրավորման, հանրային կառավարման մասնագետներ և այլն:

Հասկանալի պատճառներով գործատուները կարևորում են մասնաճյուղում նազմական ամբիոնի ստեղծումը, բուհի շրջանակում բանակի համար անհրաժեշտ սպայական կադրերի պատրաստումը:

Առանձին քննարկման, հնարավորությունների գնահատման ու վերագնահատման հարց է շահակիցների առաջարկը, կապված հետդիպլոմային կրթության կազմակերպման հետ: Խոսքը առաջին հերթին վերաբերվում է մագիստրոսական կրթության կազմակերպմանը:

Հետազոտվող հիմնախնդրի համատեքստում է նաև ԵՊՀ ԻՄ մասնագիտությունների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների քննարկվող ժամանակահատվածում ներկայացրած հաշվետվությունները: Դրանցում, ընդհանուր, առավելապես դրական եզրակացությունների կողքին առկա են նաև մասնագիտական պատրաստության որակի բարելավմանն ուղղված որոշակի առաջարկություններ: Մեջբերենք դրանցից մի քանիսը, որոնք մեր կարծիքով արժանի են ուշադրության.

1. «Կիրառական արվեստ» մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը գտնում է, որ ուսումնառության ընթացքում ուսանողները պետք է շատ ավելի տեղեկացված լինեն Տավուշի մարզի հոգևոր մշակութային կոթողների մասին, հաճախակի այցելեն արվեստի գործերի թանգարաններ և պատկերասրահներ: Անհրաժեշտ է համարվում նաև թեմաները դարձնել ավելի արդիական, դրանց իրացման համար կիրառել նոր մեթոդներ:
2. «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը անհրաժեշտ է համարում հասնել այն բանին, որ թեմաները ունենան առավել որոշակի ուղղվածություն և կատարման համար մատչելիություն:
3. «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության գծով առաջարկվում է հարցաշարերում պարտադիր ընտրել դպրոցական ծրագրի թեմաները արտացոլող հարցեր և ավարտական աշխատանքներում նախատեսել միջդիսցիպլինար նշանակության թեմաներ:
4. «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության շրջանավարտները, ըստ հանձնաժողովի պետք է ավելի խորը տեսական գիտելիքներ ունենան, կարողանան դրանք ինքնուրույնաբար կիրառել Հայաստանի Հանրապետության տնտեսության ճյուղերի վերլուծության մեջ:
5. «Մերվիս»-ի հանձնաժողովը առաջարկում է. մեծացնել ավարտական աշխատանքների կիրառական կողմը; առավել ակտիվացնել ուսումնական գործընթացին շահագրգիռ կողմերի (գրոսաշրջային օպերատորների, հյուրանոցային ծառայություններ մատուցողների և ոլորտում այլ գործատուների) մասնակցության գործընթացը:
6. Քանի որ քննական հարցերը ծավալուն էին և կարևորը առանձնացնելիս ուսանողները հանդիպում էին դժվարությունների, «Հայոց լեզու և գրականություն»

մասնագիտության հանձնաժողովը առաջարկում է հարցերի քանակը մեծացնելով՝ փոքրացնել դրանց ծավալը: Նմանատիպ են նաև <<Ֆրանսերեն լեզու և գրականություն>> մասնագիտության գծով առաջարկները: Ի լրումն այստեղ նշվում են ավարտական աշխատանքներում կառուցվածքի հաճախակի հանդիպող անհամապատասխանությունը ներկայացվող պահանջներին, «Ներածություն» և «Եզրակացություն» բաժինների վրա ավելի լուրջ ուշադրության անհրաժեշտությունը: Կարևորվում է նաև հարցաթերթերի կազմման ժամանակ ընդհանուր ձևակերպումներից խուսափումը, համեմատական ուսումնասիրությունների իրագործումը:

7. «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության պատասխանատուները նշում են որոշակի թեմաներով բովանդակությունների համընկնումը, ինչը ցանկալի չէ: Առաջարկվում է ավարտական աշխատանքներում պահպանել գրականագիտության և լեզվաբանության կապը, ինչը ուսանողներին հնարավորություն կտա ավելի ինքնուրույն վերլուծություն կատարել: Այստեղ ևս շեշտվում է ներածության և եզրակացության պատահող ոչ պատշաճ ձևակերպումները:
8. «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության պատասխանատուները համարում են, որ հարկավոր է մասնագիտական ճիշտ կողմնորոշումը դնել պատշաճ հիմքերի վրա; ուսուցման գործընթացը հարստացնել տեխնոլոգիական ժամանակակից համակարգերով; ինտեգրվել եվրոպական կառույցներին և տեղայնացնել առաջավոր փորձը; դասավանդման ընթացքում ամրապնդել տեսության և պրակտիկայի գործնական կապը՝ հնարավորինս ավելացնել սեմինարների և գործնական պարապմունքների ժամաքանակը:
9. Ըստ «Պատմություն» մասնագիտության ներկայացուցիչների, թեմաները պետք է ավելի ժամանակակից հնչեղություն ունենան, իսկ գրախոսություններում դիտողությունները լինեն ավելի որոշակի և առարկայական:

Ընդհանրացնելով ասենք, որ Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը հույս ունի, թե 2011-15թթ ընթացքում անցկացված հարցումների և ուսումնասիրությունների հիման վրա ներկայացրած հաշվետվություններ, ռեսպոնդենտների և մասնագիտությունների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների առաջարկությունները կքննարկվեն մասնաճյուղի համապատասխան կառույցներում, կարվեն ճիշտ հետևություններ և դրանց հիման վրա իրագործած բարեփոխումները կծառայեն կրթության որակի բարելավմանը:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին